



Հայաստանի կենսաբ. հանդես, 4(62), 2010

ՏԱՐԲԵՐ ԳԵՆՈՏԻՊԻ ԵՎ ՍԵՐՈՒՄԴՆԵՐԻ ԱՅԾԵՐԻ ԱՐՅԱՆ ՍԵԶՈՆԱՅԻՆ ՈՐՈՇ ԿԵՆՍԱՔԹԻՍԻԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ.ՅՈՒ. ՄԱՐՍԱՐՅԱՆ, Վ.Կ. ԳԱՍՊԱՐՅԱՆ, Ա.Լ. ՄՈՎՍԻՍՅԱՆ,
Ա.Մ. ԴԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ռ.Գ. ՔԱՄԱԼՅԱՆ

Հայաստանի պետական ագրարային համալսարան

Հետազոտվել են ազոտային նյութափոխանակության ցուցանիշները այժերի տարրեր սերունդների և տեղական և թոգեննբուրգային ցեղերի, ինչպես նաև նրանց խառնածինների մոտ: Որոշվել են լակտասուիդիդրոգենազի (LDG) և ալյակինստրասամինազի (ALQ) ակտիվության սեզոնային տատանումները: Տարիքի հետ ցեղերի միջև հայտնաբերվել է ֆերմենտային ակտիվության հավասարեցում: Խաչասերումը նպաստում է ազոտային նյութափոխանակության ակտիվացմանը և գլուտամինի մակարդակի բարձացմանը, որոնք ապահովում են իմունային բջիջները կյուրերով և եներգիայով:

Այժ - սեզոն - արյուն - ֆերմենտ - գլուտամին - կրեատինին -
միզանյութ - ամոնիակ

Изучены показатели азотистого обмена разных поколений и пород коз – местных и тогенбургских, а также их помесей. Выявлены сезонные колебания активности ферментов крови, в частности LDG и ALT. Констатировано выравнивание породных различий ферментной активности крови с возрастом. Скрещивание способствует активизации азотистого обмена и повышению уровня глутамина, обеспечивающего иммунные клетки веществом и энергией.

Козы – сезон – кровь – фермент – глутамин – креатинин – мочевина – аммиак

The indices of nitrogen metabolism in blood of different breeds of goats and their crossbreeds have been studied. Seasonal fluctuations regarding the activity of blood enzymes have been found out, namely LDG and ALT. It has been noted that the breed differences in enzyme activity of blood equalize with age. Crossing makes process of nitrogen metabolism more active and causes the glutamine level to increase which provides the immune cells with substance and energy.

Goat – season – blood – enzyme – glutamine – creatinine – urea –
ammonium

Հայաստանի անասնաբուծության կարևոր բնագավառներից է այծաբուծությունը, որը ապահովում է բարձրորակ գյուղատնտեսական մթերքների, մասնավորապես կաթնամթերքների արտադրանքը: Ցավոք, տեղական այժերը օժտված չեն բարձր կաթնային մթերատվությամբ: Այդ սպատակով 2000թ. Հայաստան են ներմուծվել բարձր կաթնատվություն ունեցող այժեր ցեղեր, որոնք տրամադիմացվել են տեղական ցեղի հետ: Սելեկցայի միջոցով հաջողվել է զգալիորեն բարձրացնել տեղական այժերի կաթնատվությունը: Հայտնի է, որ մթերատվության հիմքում ընկած են օրգանիզմում ընթացող կյութափոխանակության՝ հատկապես ազոտական գործնթացները, որոնց ուսումնասիրության արդյունքները և ներկայացված են տվյալ աշխատանքում:

Ուսումնասիրվել են տեղական և ներկրված (թոգեներուրդ) ցեղերի այծերի և նրանց խառնածինների տարբեր սերունդների արյան ազոտային և էներգետիկ նյութափոխանակության ցուցանիշները, որոնք կարող են կապ ունենալ այծերի մթերատվության և առողջության հետ: Այժերը բուժվում են Եղեգնաձորի, Արիդե այծաբուծական կենտրոնում:

Նյութ և մեթոդ: Արյունը վերցվել է ներմուծված թոգեներուրդյան, տեղական և համապատասխան հասակի տրամախաչված տարբեր սերնդի այծերից (F_1 , F_2 , F_3): Յուրաքանչյուր խմբում առանձնացվել են 5 կենսակիներ, որոնցից վերցվել է 10 մլ արյուն, տեղադրվել 1 ժամով թերմոսառա 37° C-ի պայմաններում 3.5 %-ալու կիտրոնաթթվի և ԵԴՏ-ի առկայությամբ: Ենտրիֆուգացումից հետո ստացված արյան շիճուկը օգտագործվել է կենսաքիմիական հետազոտությունների համար: Որոշվել են ազոտական նյութափոխանակության որոշ մասնակիցների և արգասիքների (զլոտամին, ամնիակ, միզամայութ, կրեատիկին) քանակները և ֆերմենտների ($L\gamma\gamma$ -լակտատիկիդոգենազ, ԱԼՏ-լալանիսամինարանսֆերազ, ՂԱՏ-ադենոզինեզամազ) ակտիվությունը:

Ամոնիակը և գլուտամինը որոշվել են միկրոդիֆուզիոն մեթոդով [2, 9]: Միզամայութը որոշվել է ուրեազային եղանակով [10], կրեատիկինը՝ ակրիլինաթթվի հետ առաացող գունավոր կոմպլեքսի 500-520 Նմ երկարությամբ ալիքի տակ գրանցման միջոցով [5]:

$L\gamma\gamma$ -ի ակտիվությունը որոշվել է բատ աղենոգինի դեգազմինացման ընթացքում առաջացած ամոնիակի, որը ստացվել է միկրոդիֆուզիոն եղանակով [2, 9]:

ԱԼՏ-ի և ԱԼՏ-ի ակտիվությունը որոշվել է սաեկտորֆուսումերիկ եղանակով ֆերմենտին ռեակցիայի ընթացքում $L\gamma\gamma$ -ի 340 Նմ ալիքի երկարության տակ կլանման և վազմամբ [3]:

Սաման սպեկտրոֆուսումետրիկ եղանակով որոշվել է $L\gamma\gamma$ -ի ակտիվությունը [4, 11]:

Ստացված արյունները ենթարկվել են վիճակագրական մշակման համաձայն Ստյուդինտի չափանիշի:

Արդյունքներ և քննարկում: Աղ. 1-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ $L\gamma\gamma$ և ԱԼՏ ակտիվությունը բարձր է ամռանը և աշնանը, իսկ ԱԴՏ ակտիվությունը հակառակ՝ բարձր է գարնանը: Ասպարտատրանսամինազի ակտիվությունը սեզոնային տարբերությունը չի դրսարությունը:

Աղյուսակ 1. Արյան ֆերմենտների ակտիվությունը

Ֆերմենտներ, միավոր/մլ	Այժերի ցեղերը	Փորձարկման սեզոն		
		գարուն (2-ամսեկան)	ամառ (3-ամսեկան)	աշուն (7-ամսեկան)
$L\gamma\gamma$	F_1	95,6±8,4	195,6± 21,5	245,8± 23,2
	F_2	112,5± 9,5	538,0± 57,0	225,5± 22,5
	F_3	87,4± 9,1	247,0± 70,7	262,4± 28,4
	Տեղական	117,7± 12,8	289,0± 23,4	295,8± 31,6
	Թոգեներուրդյան	105,4± 14,2	215,0± 22,4	264,8± 34,5
ԱԼՏ	F_1	20,7± 1,4	36,5± 3,8	30,6± 3,3
	F_2	18,3± 1,2	57,8± 3,35	39,2± 4,3
	F_3	15,7± 1,8	58,2± 0,75	31,4± 2,9
	Տեղական	19,8± 2,3	28,7± 3,2	29,4± 3,7
	Թոգեներուրդյան	18,5± 1,5	30,8± 4,5	27,4± 2,2
ԱԱՏ	F_1	21,5± 2,2	17,5± 1,8	12,2± 0,9
	F_2	18,4± 2,2	63,4± 3,9	18,7± 2,1
	F_3	17,5± 1,9	67,7± 3,0	22,4± 2,3
	Տեղական	27,3± 3,5	19,5± 1,3	18,9± 2,3
	Թոգեներուրդյան	19,5± 1,8	16,3± 1,5	16,5± 0,9
ԱԴՏ	F_1	7,5± 0,6	6,7± 1,0	7,4± 1,2
	F_2	8,9± 1,2	7,54± 0,46	6,0± 0,5
	F_3	8,5± 1,1	6,58± 1,1	5,8± 0,7
	Տեղական	8,8± 1,0	7,3± 0,5	7,0± 0,7
	Թոգեներուրդյան	7,8± 1,0	6,4± 0,7	6,9± 0,5

Այուսակ 2. Այծերի արյան պլազմայի որոշ կենսաբիմիական ցուցանիշները

Այծերի ցեղերը, (2 ամ.)	Միզանյութ, մմոլ	Կրեատինին, մկմոլ	Ամնիակ մմոլ	Գլուտամին, մմոլ
F1	2.5 (0.2)	118 (9)	0.06(0,002)	0.63 (0.10
F2	2.9 (0.5)	107 (6)	0.07(0,005)	0.58 (0.03
F3	3.7 (0.2)	91 (9)	0.07(0.004)	0.72 (0.08
Տեղական	3.6 (0.2)	98 (6)	0.10(0,005)	0.42 (0.05
Տոգենբուրգյան	3.8 (0.3)	132 (6)	0.05(0,001)	0.62 (0.05

Պետք է նշել, որ տրամախաչումը հասակի հետ բերում է ֆերմենտների ակտիվության համեմատաբար հավասարմանը: Սակայն տեղական այծերի արյան պլազմայի L73-ի ակտիվությունը ավելի բարձր է, քան թոգենբուրգյան կամ խառնածին այծերի մոտ, ինչը չի նկատվում մնացած ուսումնասիրված ֆերմենտների նկատմամբ:

Աղ. 2-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ ցեղային տարրերությունները, որոնք դիտվում են տեղական այծերի ցեղերի միջև [1], հասակի հետ միասին նվազեցվում են, հավանաբար, հարմարվողական մեխանիզմների մորիլիցացման հետևանքով: Այսպես, խառնածինների արյան պլազմայի միզանյութի քանակը հասակի հետ աճում է, իսկ կրեատինինի քանակը նվազում, մոտենալով տեղական այծերի ցուցանիշներին: Հավանական է, որ դա կապված է սպիտակուցային նյութափոխանակ-կության ինտենսիվացման և պաշարային էներգիայի ֆունկլետատինի տեսքով կուտակման հետ: Միևնույն ժամանակ գյուտամինի քանակը, որը մեծ դեր է խաղում իմունային համակարգի բջիջների գործունեությանը [6,7,8], խառնածինների և թոգեն-բուրգյան ցեղի այծերի մոտ ավելի բարձր է, քան տեղական այծերի արյան պլազմայում:

Այսպիսով կարելի է ասել, որ տրամախաչումը նպաստում է ազոտային նյութափոխանակության գործընթացների խթանմանը և իմունային համակարգի բջիջներին էներգիայի և նյութի աղբյուրով ապահովմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Мармарян Г.Ю., Камалян Р.Г.* Некоторые показатели азотистого обмена и иммунитета в сыворотке крови разводимых в Армении коз, Ереван, с.224-226, 2001.
2. *Силакова А.И., Труш Г.П., Являякова А.* Микрометод определения аммиака и глутамина в тканевых трихлоруксусных экстрактах. Вопросы мед. химии, 5 с., 538-542, 1962.
3. *Bergmeyer HU, Scheide P, Wahlfeld; Optimization of methods for AST and alt; Clin Chem.* 24, 1, 58-73, 1978.
4. *Henry J.* Clinical diagnosis management by laboratory methods, 435 p., 1974.
5. *Herta H.* A procedure increasing the specificity of the Jaffe reaction for the determination of creatine and in urine and plasma. *Clin Clim Acta*, 1, 210-224, 1956.
6. *Newsholme E.A.* Nutrition of immune cells: The implications for whole body metabolism. *Braz.J.Med.Biol.Res.* 30, p.345-361, 1997.
7. *Newsholme P.* Why Is L-Glutamine Metabolism Important to Cells of the Immune System in Health.Postinjury, Surgery or Infection? *J.Nutrition*, 131, 2515S-2522S, 2001,
8. *Newsholme P., Lima M.M.R., J.Procopio, T.C.Pithon-Curi,S.Q.Doi,R.B.Bazotte and R.Curi.* Glutamine and glutamate as vital metabolites. *Braz J.Med.Biol.Res.* 153-163, 2003.
9. *Seligson D., Seligson H.* Microdiffusion method for determination of nitrogen liberated as ammonia. *J. Lab. Clin. Med.*, 38, p. 324-330, 1951.
10. *Tabacco A., Meiattini F., Moda E., Tazli P.* Simplified enzymic/colorimetric serum urea nitrogen determination. *Clin Chem.* 25, 2, 336-337, 1979.
11. *Wroblewsky F., La Due J.S.* Lactic Dehydrogenase activity in blood, Proc Soc. Exptl. Biol. Med. 90, p. 210-213, 1955.

Ստացվել է 16.04.2010